Սույն հրատարակությունը իրագործվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ կողմից Նորվեգիայի Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) ֆինանսական աջակցությամբ:

ՀՀ, Երևան, 0019
Բաղրամյան պող., 24դ, 609 սենյակ
հեռ. / ֆաքս. (+374 10) 523604
էլ. փոստ: office@awhhe.am

Գորշ արջ
(Ursus arctos)

Լուսանկարը՝ Ի. Խորոզյանի,
Ա. Մալխասյանի, Մ. Բոյաջյանի

Երևան 2008

Բնակության արեալը

Մեր հանրապետությունում տարածված գիշատիչներից ամենախոշորն է: Հանդիպում է հանրապետության հյուսիսային շրջանների անտառներում, ինչպես նաև Գորիսի, Մեղրու, Կապանի, Սիսիանի, Արարատի տարածաշրջաններում:

Արտաքին նկարագիրը

Լուսանկարը՝ Ի. Խորոզյանի, Ա. Մալխասյանի, Մ. Բոյաջյանի

Մարմնի երկարությունը 200 սմ է, քաշը՝ 190 – 300 կգ: Ունի ամուր ոտքեր, որոնք զինված են մեծ ու կեռ, գորշ գույնի ճանկերով: Առջևի թաթերը 2-3 անգամ մեծ են հետևի թաթերից: Գլուխը լայն է, ականջները՝ փոքր, դունչը՝ կարճ: Գունավորումը՝ գորշ, հազվադեպ՝ սև կամ շիկավուն: Հայաստանում համատեղ ապրում են մուգ գորշ, մեծ չափսի և բաց գույնի, ավելի փոքր արջեր: Ուսերին կա բաց գույնի շերտ, հատկապես երիտասարդ արջերի մոտ: Կրծքի վրա երբեմն լինում է սպիտակ գույնի բիծ:

Սովորական պայմաններում արջերը դանդաղկոտ, ծանրաշարժ կենդանիներ են, սակայն վտանգի դեպքում այս կենդանիներն անճանաչելի ճարպիկ ու արագաշարժ են, արագ կողմնորոշվում են և օժտված են ֆիզիկական մեծ ուժով:
Արջերի տեսողությունը թույլ է, սակայն դրա փոխարեն լավ է զարգացած հոտառությունը:

Կենսակերպը և տնտեսական նշանակությունը

Արջերը սովորաբար անտառաբնակ կենդանիներ են, սակայն հանդիպում են նաև ժայռերի ու կիրճերի քարակույտերում, քարանձավներում, թփուտներում և այլն: Ձմռանը քուն են մտնում որջերում, որոնք պատրաստում են տարբեր տեղերում՝ կոտրված հսկա ծառերի տակ, փոսերում, քարանձավներում: Որջում անկողինը /ցամքարը/ պատրաստում են ծառերի չոր ճյուղերից ու տերևներից, իսկ Յուրաքանչյուր որջում քնում է մեկ արջ, միայն մայրն է քնում ձագերի հետ: Ձմռանը ոչ բոլոր արջերն են քնում, կան արջեր որոնք թափառում են մինչև գարուն: Այդպիսի արջերը հատկապես վտանգավոր ու ագրեսիվ են կերի պակասության հետևանքով: Քնած արջերը շատ զգոն են և ամեն վայրկյան կարող են արթնանալ: Միակ գիշատիչ կենդանին է, որն ի վիճակի է երկար ժամանակ մնալ առանց կենդանական կերի: Արջերը հաճույքով ուտում են թարմ խոտ, տարբեր խոտաբույսեր, մրգեր, հատապտուղներ, սնկեր, գերադասում են չհասած ցորեն ու գարի: Երբեմն թափ են տալիս սալորի, տանձի, ընկույզի ծառերը, իսկ հետո՝ հավաքում: Արջի կերաբաժնում առանձին տեղ են գրավում մրջյունները, վերջիններիս և այլ միջատների թրթուրները, որոնց արջը դուրս է հանում քարերի ու կեղևների տակից: Արջերը սնվում են նաև գորտերով, մողեսներով, մկներով, դաշտամկներով, թռչուններով, դրանց ձագերով, ձկներով և խոշոր կաթնասուն կենդանիներով: Երբեմն հարձակվում են ընտանի կենդանիների վրա:

Ապրում են 30 – 40 տարի: Մազափոխությունը տեղի է ունենում ապրիլ – հունիս ամիսներին:

Բազմացումը

Լուսանկարը՝Ա. Մալխասյանի

Բեղմնավորումը տեղի է ունենում ամռանը: Հաճախ այն ուղեկցվում է արուների միջև պայքարով, որն երբեմն ունենում է մահացու ելք: Արջերը ծնում են 2 տարին մեկ: Հղիությունը տևում է 7 ամիս: Ծինը տեղի է ունենում ձմռանը՝ որջում: Ծնում են 1 – 2, երբեմն՝ 6 ձագ, որոնք որջից դուրս են գալիս 2 – 3 ամիս անց: Ձագերը կաթով կերակրվում են 5 ամիս ու մնում են մոր մոտ 1 տարուց ավել: Սեռահասուն են դառնում 3 տարեկանում:

Սահմանափակող գործոնները

Որսագողություն, անտառների կրճատում: